# ԱՄՆ-Ի ԳԼՈԲԱԼ ԼՐՏԵՍՈՒԹՅԱՆ ՍԻՍՏԵՄԸ

Հ. Գ. ՍԻՄՈՆՅԱՆ

Գեներալ-մայոր, ռազմական գիտությունների դոկտոր

*ԱՄՆ-ի պատմության մեջ հետախուզական ծառայության ներգործությունը երկրի ներքին և արտաքին քաղաքականության, նրա ռազմական դոկտրինայի, ստրատեգիայի ու տակտիկայի վրա, այդ քաղաքականության իրագործման վրա երբևիցե այնքան ուժեղ չի եղել, որքան այսօր։ Ամերիկյան հետախուզության հայտնի գիտակ Հարի Ռենսոմը խոստովանում է, որ հետախուզական օրգաններն ամենայն ակտիվությամբ մասնակցում են Վաշինգտոնի արտաքին քաղաքական՝ դիվանագիտական, տնտեսական, ռազմական հիմնական գործողություններին, պրոպագանդային ու «հոգեբանական պատերազմի» նախապատրաստությանը։ Այլ խոսքով, տոտալ լրտեսությունն ընդգրկում է ԱՄՆ-ի պետական օրգանների կյանքի ու գործունեության բոլոր կողմերը, «թիկնոցի ու դաշույնի» չարագուշակ թաթն առանց որևէ դժվարության կարելի է նկատել խաղաղության, դեմոկրատիայի ու սոցիալիզմի դեմ ավելի ու ավելի հաճախակի դարձած այն դիվերսիաներում, որ ձեռնարկում է իմպերիալիստական ռեակցիան։*

*«ԱՄՆ-ի Կենտրոնական հետախուզական վարչությունը, քողարկվելով թիկնոցի տակ, տնօրինում է արտաքին քաղաքականությունը և դրանով իսկ ստանձնում ԱՄՆ-ի պրեզիդենտի ու կոնգրեսի իրավասությունները։ Նա դարձել է անտեսանելի մի տերություն, որը ենթարկվում է լոկ ինքն իրեն»,—նկատել է դեմոկրատական կուսակցության ականավոր գործիչներից մեկը՝ Միննեսոտա նահանգի սենատոր Յուջին Մակարտին։*

*Զարգացնելով այդ միտքը, ամերիկյան ժուռնալիստներ Դեվիդ Ուայզը և Թոմաս Ռոսը գրում են. «Այժմ Միացյալ Նահանգներում երկու կառավարություն կա՝ մեկը տեսանելի, մյուսն անտեսանելի։ Առաջին կառավարության մասին մարդիկ կարդում են թերթերում, իսկ երեխաները սովորում են դասագրքերով։ Երկրորդը խորհրդավոր ու ճյուղավորված մի կազմակերպություն է, որը կենսագործում է Միացյալ Նահանգների «սառը պատերազմը»։ Այդ երկրորդ, անտեսանելի կառավարությունն զբաղված է հետախուզական տեղեկություններ ժողովելով, լրտեսությամբ, գաղտնի գործողություններ է պլանավորում ու իրագործում ամբողջ աշխարհում»։*

*«Գաղտնի գործողություն» տերմինը ամերիկյան հետախուզության բառապաշարում նշանակում է քայքայիչ գործունեության զանազան տեսակներ, որոնք ուղղված են ուրիշ երկրների դեմ։ Դրանց թվին են պատկանում լրտեսական, հետախուզական, քաղաքական և հատուկ գործողությունները։ Լրտեսական գործողության տակ պետք է հասկանալ գործակալների օգնությամբ գաղտնի ինֆորմացիա ստանալը. հետախուզականը՝ դա գաղտնի ինֆորմացիա ժողովելն է՝ դիտարկումների, ականջ դնելու, հատուկ ապարատներով*

գաղտնի լուսանկարումներ կատարելու միջոցով։ Քաղաքական գործողության տակ հասկացվում է օտար պետությունների այն կառավարությունների դեմ հեղաշրջումներ կազմակերպելը, որոնք հաճելի չեն ԱՄՆ-ի ղեկավար շրջաններին, պետական հեղաշրջումների նախապատրաստումն ու իրագործումը, ինչպես նաև զանազան քաղաքական գաղտնի ակտերի անցկացումը։ Հատուկ գործողությունները նշանակում են տեռորներ, քաղաքական սպանություններ։

Պետական պաշտոնական քաղաքականության մեջ ներխուժելու իրավունքը հետախուզությանն ընձեռել է «Պետական անվտանգության մասին» 1947 թ. կոնգրեսի ընդունած օրենքը։ Կենտրոնական հետախուզական վարչության (ԿՀՎ) նախկին շեֆի՝ Ալեն Դալլեսի խոսքերով այդ օրենքն ԱՄՆ-ի հետախուզության համար «կառավարության մեջ ավելի ազդեցիկ դիրք ապահովեց, քան հետախուզությունն ունի աշխարհի որևէ այլ երկրում»։

Այսպիսով, ԱՄՆ-ի հետախուզական օրգաններն օժտված են այնպիսի ֆունկցիայով, որպիսինը չի ունեցել և չունի աշխարհի և ոչ մի հետախուզություն։ Նա տարբեր երկրների մասին ինֆորմացիա է ժողովում ոչ միայն ամերիկյան ագրեսիայի հնարավոր օբյեկտները նկատի առնելով, այլև, որ առավել կարևոր է, քաղաքական տեսանկյունից։ Նա իրավունք ունի ինքնուրույն քայլեր ձեռնարկելու կամ, ինչպես դա ասվում է ամերիկյան գրականության մեջ, «իրավասու է գործելու սեփական ինֆորմացիայի հիման վրա, իրագործելու այն քաղաքականությունը, որը հենվում է տվյալ հետախուզական ծառայության տեղեկությունների վրա»։

Դրա հետ միաժամանակ չի կարելի պնդել, թե ԱՄՆ-ի հետախուզությունը մի անտեսանելի կառավարություն է. դա լոկ անտեսանելի մի շարք օրգանների հանրագումար է, օրգաններ, որոնք միասին կամ առանձին վերցրած գործում են ԱՄՆ-ի տեսանելի պաշտոնական կառավարության օգտին։ Գոյություն ունեցող փաստերն ամենայն ակնառությամբ վկայում են այն մասին, որ տեղի է ունեցել մի ասիմիլյացիա, որտեղ առաջին պաշտոնական կառավարությունը փորձում է բացեիբաց աշխարհին մի բան մատուցել, իսկ անտեսանելի օրգանների միջոցով անել մի այլ բան։ «Նյու-Յորք թայմս» թերթը իր հոդվածներում ամենայն որոշակիությամբ նշում է, որ հետախուզական-դիվերսիոն օրգանները գործում են «կառավարության բարձրագույն քաղաքական ղեկավարների» գիտությամբ։ Ալեն Դալլեսը «Հետախուզության արվեստը» վերնագրով իր գրքում ընդգծում է, որ ԿՀՎ «անիջականորեն ենթարկվում է կառավարությանը»։ Այդպիսով, կառավարությունը և առաջին հերթին պրեզիդենտը կրում է այն քայքայիչ գործունեության ամբողջ պատասխանատվությունը, որ ծավալում են ԱՄՆ-ի հետախուզական օրգանները, որոնք հազարոտ նյանների նման ձգտում են համընդհանուր լրտեսության և քայքայիչ գործունեության իրենց շոշափուկներով ընդգրկել բառացիորեն ամբողջ երկրագունդը։

ԿՀՎ-ի ավերիչ գործունեության օբյեկտ կարող է ծառայել ամեն մի երկիր, անկախ այն բանից, համաշխարհային խոշոր տերություն է այն, թե՞ ոչ մեծ պետություն, տնտեսապես զարգացած է, թե՞ հետամնաց, Միացյալ Նահանգների հանդեպ բարեկամաբար է տրամադրված, թե՞ թշնամաբար, նրա սահմաններից հեռու է ընկած, թե՞ մոտ։ Ըստ որում, «թիկնոցի և դաշույնի» կայսրությունը հատուկ ուշադրություն է դարձնում այն լրտեսական-քայքայիչ գործունեությանը, որ տարվում է սոցիալիստական երկրների դեմ։ ԱՄՆ-ի իմպերիալիզմը, ձգտելով ճեղքվածք առաջացնել սոցիալիզմի սիստեմում,

բայբայել նրա միասնությունը, թուլացնել միջազգային կոմունիստական և ամբողջ դեմոկրատական շարժման համախմբվածությունը, չի խորշում ոչ մի միջոցից։

Մեր մամուլում արդեն հաղորդվել է ԱՄՆ-ի ցամաքային ուժերի՝ ՆԱՏՕ-ի Եվրոպական դոտու հրամանատարության այն «օպերատիվ պլանի» բովանդակության մասին, որտեղ քննարկվում են սոցիալիստական երկրների նկատմամբ ագրեսիայի նախապատրաստության և անցկացման զանազան տարբերակները։ Հետաքրքրությունից զուրկ չէ, որ նրանում հատկապես մանրամասնորեն են քննարկվում ԱՄՆ-ի զինված ուժերի և հետախուզության, այսպես կոչված «նախնական գործողությունները» ընդդեմ Վարշավայի պայմանագրի երկրների։ Ըստ որում, հենվելով «աշխարհագրական գործոնի» վրա, պլանը նախ և առաջ նախատեսում է «Արևելյան Գերմանիայի և Չեխոսլովակիայի ազատագրումը»։

Այդ պլանի մի առանձին բաժնում նշված է հետախուզական օրգանների կարևորագույն խնդիրները։ Նրանք բոլոր միջոցներով ու եղանակներով պետք է պարզեն.

1) ՆԱՏՕ-ի մասնակից-երկրների վարած «հատուկ» և «հոգեբանական» գործողությունների արդյունքները և ազգաբնակչության տարբեր խավերի ընկալունակության աստիճանը դրանց նկատմամբ.

2) Վարշավայի պայմանագրի երկրներում կազմակերպված օպոզիցիոն ընդհատակյա այն խմբերի առկայությունը, որոնք կարող են հակագործողությունների դիմել այդ երկրների կառավարությունների դեմ, այդ խմբերի հնարավորությունները, ղեկավարները և նրանց հետ շփումներ հաստատելու ուղիները.

3) Մասնագիտական կամ որևէ այլ կատեգորիայի բնակչության այն հավանական խմբերը, որոնք ընդունակ են խռովություն կամ տարերային ապստամբություն բարձրացնել.

4) Այն ժամանակը, տեղը և հանգամանքները, որոնց ընթացքում կարող է դիմադրական շարժում կամ ապստամբություն առաջանալ գոյություն ունեցող կառավարությունների դեմ և դրսից ինչ օգնություն է պետք դրա համար.

5) Օպոզիցիոն ուժերի թափանցման աստիճանը կոմունիստական կուսակցությունների մեջ և նրանց հնարավորությունը՝ հակազդել այդ կուսակցությունների գործունեությանը։

Յուրաքանչյուր սոցիալիստական երկրի գծով լրտեսների և դիվերսանտների առջև գրված են առավել կոնկրետ խնդիրներ։ Ահա, օրինակ, Չեխոսլովակիայի Սովետական Սոցիալիստական Հանրապետության գծով առաջադրված խնդիրներից մի քանիսը.

ա) Չեխոսլովակիայում մոտակա ժամանակներում կամ ապագայում պետական հեղաշրջման, կամ էլ ՆԱՏՕ-ի ծրագրերի վրա ազդող որևէ այլ փոփոխության մասին վկայող նշաններ.

բ) Չեխոսլովակիայի պետական անվտանգության օրգանները, ռազմական հակահետախուզությունը և հակահետախուզական այլ ծառայությունները օպոզիցիոն ուժերի թափանցման աստիճանը և այդ օրգանների կողմից անցկացվող գործողություններին հակազդելու նրանց հնարավորությունները։

ԱՄՆ-ի, ինչպես նաև ՆԱՏՕ-ի հետախուզությունը դրանց հետ միաժամանակ հետաքրքրվում են բազմաթիվ այլ հարցերով։ Դրանց թվին են մասնավո-

րապես պատկանում ռազմական բնույթի հարցերը, երկրի և նրա առանձին շրջանների տեղագրական և հիդրոգրաֆիական առանձնահատկությունները, քաղաքական և տնտեսական տեղեկությունները, ֆինանսների, առևտրի, արդյունաբերության, գյուղատնտեսության, կապի միջոցների և տրանսպորտի մասին տեղեկությունները։ ՆԱՏՕ-ի ստրատեգներին հետաքրքրում է նաև հասարակական բնույթի ինֆորմացիան, նյութա-կուլտուրական զարգացումը (հեռուստատեսություն, մամուլ, կինո, ռադիո, արվեստ, գիտություն և այլն)։ Մի խոսքով չկա մարդկային գործունեության այնպիսի ասպարեզ, որը չհետաքրքրեր իմպերիալիստական երկրների լրտեսներին։

Անցած տարվա սկզբից, երբ ԱՄՆ-ի կառավարության գլուխ կանգնեց հանրապետական կուսակցությունը, ամերիկյան թերթերն ու ամսագրերը քիչ չեն գրել այն մասին, որ նոր վարչակարգն իբրև թե արմատապես վերագնահատում է արտաքին քաղաքական կուրսը, որ Ջոնսոնի կառավարության ավանդույթան տեղի կտա ողջամտությանն ու զգաստ դատողությանը միջազգային պրոբլեմների նկատմամբ։

Վերջին ժամանակների իրադարձությունները, այդ թվում «EC—121» ինքնաթիռ-լրտեսի միջադեպը, համոզիչ կերպով ցույց են տալիս, որ Վաշինգտոնում «հրամանատարության փոփոխումը» չի շոշափել Միացյալ Նահանգների ագրեսիվ կուրսի էությունը, որը պայմանավորված է ռազմա-արդյունաբերական մոնոպոլիայի շահերով։

Պաշտոնական քաղաքականության աստիճանին հասցված այդ կուրսի բաղադրիչ մասերից մեկը գլոբալ լրտեսական-քայքայիչ գործունեությունն է, որն իր սուր ծայրով առաջվա պես ուղղված է սոցիալիստական երկրների համագործակցության դեմ։

Այսօր ամերիկյան հետախուզությունը մի առանձին օրգան չէ, այլ մի ամբողջական «հետախուզական ընկերակցություն» է։ Բացարձակապես բոլոր երկրներում, ներառյալ նաև Միացյալ Նահանգների հետ դաշնակցող երկրներում, քաղաքական և դիվանագիտական լրտեսությամբ, ինչպես նաև ռազմական, տնտեսական և տեխնիկական հետախուզությամբ զբաղվող, սարքավորված, տեռոր ու դիվերսիա իրագործող և լրտեսական-հետախուզական մասսայական ցանց տեղակայող ամերիկյան պետական հիմնական կազմակերպությունը 1947 թ. ստեղծված Կենտրոնական հետախուզական վարչությունն (ԿՀՎ) է, որը բաղկացած է չորս բաժիններից՝ ծրագրման, հետախուզական ծառայության, գիտության ու տեխնիկայի, ապահովության։ Յուրաքանչյուր բաժին գլխավորում է ԿՀՎ դիրեկտորի տեղակալը։

ԿՀՎ առաջատար բաժինները ծրագրման ու հետախուզության բաժիններն են։ «Հենց դրանք են,— ըստ «Նյու-Յորք թայմսի» բնորոշման,— ԿՀՎ գործունեության սկիզբն ու վերջը, նրա ձեռքերն ու ուղեղը»։ Այդ բաժինները գործակալներ են հավաքագրում թե՛ իրենց երկրում և թե՛ արտասահմանյան պետություններում, գնում են ծախու քաղաքագետներին, ստեղծում քաղաքական կուսակցություններ, կազմակերպություններ ու խմբավորումներ, նախապատրաստում են պետական հեղաշրջումներ և զինված ինտերվենցիաներ, կազմակերպում են այն զավթողական ակցիաները, որոնք ամերիկյան իմպերիալիզմը անց է կացնում մյուս երկրների ժողովուրդների դեմ։ Այդ վարչությունում աշխատող մարդկանց թիվը՝ պետական գաղտնիք է։ Դրա մասին հայտնի է միայն սահմանափակ թվով մարդկանց, բայց ենթադրվում է, որ

միայն նրա կենտրոնական ապարատն ունի 15 հազար աշխատող։ Իսկ Միացյալ Նահանգներում և արտասահմանում ԿՀՎ սիստեմում աշխատող մարդկանց թիվն անցնում է 115 հազարից՝ ներառյալ նաև հազարավոր գաղտնի գործակալները և տեղերից տեղեկություններ հաղորդողները՝ ամբողջ աշխարհում, ինչպես և այն անձինք, որոնք գործում են ԿՀՎ ֆինանսավորած կազմակերպությունների համար ու ծառայում են քողարկման նպատակին։ Համաշխարհային հասարակայնությունից և ամերիկյան հարկատուներից խնամքով թաքցվում է նաև ԿՀՎ բյուջեի գումարը։ Այդ բյուջեն ներթաքցված է մյուս պետական հիմնարկների և ամենից առաջ Պենտագոնի, Պետական դեպարտամենտի և պաշտոնական ու կիսապաշտոնական գերատեսչությունների բյուջեներում։ Ըստ ամերիկյան աղբյուրների ԿՀՎ տարեկան ծախսում է մոտ մեկուկես միլիարդ դոլար։

Լրտեսական-հետախուզական ծառայության այդ օրգանի ուղեղային ու մկանային կենտրոնը տեղավորված է Լենգլիում՝ Վաշինգտոնի մոտերքը, ժամանակակից մի ութհարկանի շենքում։ Նրա սպասարկող սենյակների մակերեսը հասնում է 100 հազար քառակուսի մետրի, իսկ միջանցքներն ու մյուս օժանդակ շենքերը զբաղեցնում են ևս 55.700 քառակուսի մետր տարածություն։ Եվ, այսուամենայնիվ, այդ շենքում ԿՀՎ Վաշինգտոնի աշխատակիցները չեն տեղավորվում։

Թեև վարչությունը համարվում է խիստ գաղտնի մի կազմակերպություն, որն իր գործունեությունն իրագործում է գլխավորապես արտասահմանում, նա խոշոր բաժիններ ունի ԱՄՆ-ի ավելի քան երեսուն քաղաքներում։ Արտասահմանյան մամուլի հաղորդումներով ԿՀՎ բաժանմունքներ ունի մասնավորապես Նյու-Յորքում, Չիկագոյում, Լոս-Անժելոսում, Բոստոնում, Դետրոյտում, Ֆիլադելֆիայում, Սան-Ֆրանցիսկոյում, Պիտսբուրգում, Հյուստոնում, Սենտ-Լուիսում, Նոր Օրլեանում, Սիեթլում, Դենվերում և Միննեապոլիսում։ Նրանց հեռախոսների համարները և նույնիսկ հասցեները մյուս ֆեդերալ հիմնարկների հետ կողք-կողքի նշված են տեղական բոլոր հեռախոսագրքերում։ Դրանից զատ, ԿՀՎ «դիտորդներ» ունի համարյա բոլոր համալսարաններում։ Սրանց պարտականությունն է ի հայտ բերել այն ուսանողներին, որոնք լավ գործակալներ դառնալու համար անհրաժեշտ հատկանիշներ ունեն։ Դրա հետ միաժամանակ . ուսանողական կազմակերպությունների միջոցով, լինեն դրանք ամերիկյան կամ միջազգային, ԿՀՎ «ներդնում» է իր այն գործակալությունը, որը տվյալ պահին և տվյալ պայմաններում կկատարի նրա առաջադրանքը, իսկ հետագայում կիրագործի ամերիկյան արտաքին քաղաքականությունը՝ միջազգային հարցերում։

ԿՀՎ այն գործակալները, որոնք գործում են արտասահմանում, բաժանվում են երկու խմբի։ Առաջին խմբին են պատկանում այն լրտեսները, որոնք գործում են դեսպանատների և առևտրական ներկայացուցչության տակ քողարկված։ Որպես կանոն, նրանք համարվում են քաղաքական, տնտեսական կամ ֆինանսական ներկայացուցիչներ, դեսպանական բաժինների աշխատողներ, միջազգային զարգացման (մյուս պետություններին օգնող ամերիկյան կազմակերպություն) կամ ԱՄՆ-ի ինֆորմացիոն գործակալությունների ծառայողներ։ Իսկ ԿՀՎ ռեզիդենտը պաշտոնապես համարվում է կամ դեսպանի հատուկ օգնականը, կամ էլ բարձրաստիճան քաղաքական պաշտոնավոր։

Երկրորդ խմբի գործակալները «անմաքուր գործերում» մասնագիտացողներն են։ Դրանք հետախույզներն են, հակահետախույզները, դիվերսանտները, հեղաշրջում կազմակերպող մասնագետները։ Նրանք քողարկվում են բիզնեսմենների, գիտնականների, միսիոներների, տուրիստների, ուսանողների կամ բարեգործական կազմակերպությունների դասատուների անվան տակ։

Բացահայտելով այն նյութերի ծավալն ու բնույթը, որոնք ժողովում է ԿՀՎ, ամերիկյան Սկրիպս-Հովարդ լրագրական տրեստի թղթակից Էնդրյու Թալլին «Ամերիկյան հետախուզությունն ի ներքուստ» վերնագրով իր գրքում, գրում է, որ Լենգլիում ստացվող հսկայական գաղտնի տեղեկություններից բացի «ԿՀՎ-ի շտար-բնակարանն են հասնում ոչ պակաս քան 200 հազար օրինակ տպագիր հրատարակություններ։ Տեխնիկական աշխատողներն ուշի-ուշով ուսումնասիրում են ճամփորդական նոր քարտեզը, գնացքների չվացուցակը, գավառական թերթի յուրաքանչյուր համարը»։

Հետախուզական աշխատանքների տեմպերն արագացնելու և տեղեկությունների ճշգրտությունը բարձրացնելու նպատակով ԿՀՎ ստեղծել է հատուկ սիստեմ։ Այդ սիստեմի մեջ են մտնում միկրոֆիլմերի մշակման մասնագիտացված լուսանկարչական լաբորատորիան, պատճենավորող բաղաթիվ սարքավորումները, ավելի քան 40 միլիոն հատուկ քարտերը և ռուսերեն տեքստերն անգլերեն լեզվով ավտոմատիկ թարգմանելու համար մեքենան, որն ունի մեկ ժամում 30 հազար բառ թարգմանելու կարողություն։

ԿՀՎ և ԱՄՆ-ի հետախուզական-քայքայիչ այլ կազմակերպություններ առաջադրանքով շատ լաբորատորիաներ, գիտա-հետազոտական հիմնարկներ և փորձարարական հրաձգարաններ եռանդագին մշակում ու կատարելագործում են սպառազինության նորագույն տեսակներ և դիվերսիոն-հետախուզական միջոցներ, որոնցով լայնորեն զինվում է լրտեսների և դիվերսանտների գաղտնի բանակը։ ԿՀՎ զինանոցում կան նորագույն ատրճանակներ, ավտոմատներ, նշանառուական հրացաններ ու գնդացիրներ, ական-անակնկալներ, պայթեցման լիցքեր, որոնք քողարկվում են զանազան անվնաս առարկաների քողի տակ, թունասրվակներ, թունավորող բակտերիոլոգիական նյութեր։ ԿՀՎ-ի գործակալները զինված են ժամանակակից փոքր չափի սարքերով՝ հետախուզելու, դիտարկելու և ունկնդրելու համար։ ԿՀՎ-ի առաջադրանքով, մասնավորապես մշակված է գերզգայուն սարքավորում, որը կարող է հեռավորության վրա ընդունել այն խոսակցությունը, որ տեղի ունի փակ շենքերում՝ խոսողների ձայնից տեղի ունեցող լուսամուտների ապակիների տատանումները գրանցելու միջոցով։

«Նյու-Յորք թայմսի» խոսքերով «դա անազնիվ շատ սարքերից միայն մեկն է, որը «անձնական գաղտնիքի անձեռնմխելիության» մասին խոսքերը վեր է ածել անախրոնիզմի։ Օրինակ, համարյա անտեսանելի, մանր սարքերի միջոցով հնարավոր է դառնում այս կամ այն շենքի ամբողջ էլեկտրալարերը վերածել այն խոսակցությունների հաղորդիչների, որ տեղի ունի շենքի որևէ անկյունում։

Արհամարհելով պետությունների տերիտորիալ անկախությունը և պետության ու առանձին անձանց անձեռնմխելիությունը, Միացյալ Նահանգների պետական բոլոր մակարդակների պաշտոնատար անձինք գովերգում են ԿՀՎ-ի օգտագործած տեխնիկական միջոցները՝ որպես ինչ-որ «չտեսնված բաներ»։ «Մթնոլորտը, ասում են նրանք, ամենուր լի է ինֆորմացիայով, և հետախուզա-

կան ծառայության տեխնիկական զինվածության նպատակն է ժողովել այն ուվերածել դիտելիքների»։

«Հետախուզական ընկերակցության» մեջ, բացի ԿՀՎ-ից, մտնում են նաև այլ կազմակերպություններ. ԱՄՆ-ի պաշտպանության մինիստրության հետախուզական վարչությունը, բանակի, ռազմաօդային և ռազմածովային ուժերի հետախուզությունները, ազգային անվտանգության գործակալությունը, Պետական դեպարտամենտի հետախուզական և հետազոտական բյուրոն, ատոմային էներգիայի հանձնաժողովի հետախուզական ծառայությունը և հետաքննության ֆեդերալ բյուրոն։ Դրանցից յուրաքանչյուրն, ինքնըստինքյան, հետախուզության խոշոր օրգան է և բավականաչափ կարևոր դեր է կատարում։

Պաշտպանության մինիստրության հետախուզական վարչությունը (ՊՄՀՎ), «հետախուզական ընկերակցության» ամենից երիտասարդ անդամը և ԿՀՎ ամենից ուժեղ մրցակիցը, ստեղծել է Քենեդու կառավարությունը՝ 1961 թ. հոկտեմբերին։ Սկզբնապես նախատեսված էր, որ այդ օրգանը կկազմի Պենտագոնի բոլոր հետախուզական ծառայությունների բյուջեն, հետախուզական գործերի խորհրդին և «ընկերակցության» ամեն մի անդամին կներկայացնի հետախուզական ինֆորմացիայի այն բոլոր գնահատությունները, որ կանի պաշտպանության մինիստրությունը, կապահովի բանակի, ռազմաօդային և ռազմածովային ուժերի հետախուզական-դիվերսիոն դպրոցների ինտեգրացիան։ Սակայն Պենտագոնի հետախուզական վարչությունն արագորեն ընդլայնեց իր գործունեության ոլորտները։ Նա արգելեց հետախուզական օրգաններին առանձին-առանձին տպագիր հրատարակություններ լույս ընծայել։ ՊՄՀՎ փոխարինել է նաև շտաբի պետերի կոմիտեի հետախուզական վարչությանը՝ ինչպես հետախուզության հարցերի գծով կոնսուլտատիվ խորհրդում ներկայացուցչության առումով, այնպես էլ կոմիտեի անդամներին ինֆորմացիա մատակարարելու գործում։

Այժմ նա փաստորեն դարձել է ռազմական հետախուզության բարձրագույն օրգանը։ ՊՄՀՎ գործունեության ոլորտի ընդլայնման հետ միաժամանակ աճել է նաև նրա աշխատողների թիվը։ Մամուլի տվյալներով նրանում արդեն աշխատում են ավելի քան 6 հազար մարդ։ Իր գործունեության մասշտաբով ու բնույթով ՊՄՀՎ դարձել է ԿՀՀ-ի մրցակիցը։ Այս մասին բացեիբաց խոսել է ոչ այլ ոք, քան Ալեն Դալլեսը։ Նա հայտարարել է. «Չի կարելի բացառել այն հնարավորությունը, որ երկու այնպիսի հզոր և առատորեն ֆինանսավորվող կազմակերպություններ, ինչպիսիքն կենտրոնական և պաշտպանության մինիստրության հետախուզական վարչություններն են, կդառնան մրցակիցներ ու ախոյաններ»։

Ցամաքային ուժերի հետախուզական ծառայությունը (ՋԻ—2) ԱՄՆ-ի լրտեսական հնագույն օրգանն է։ Ներկայումս նրա վրա են դրված արտասահմանյան պետությունների զենքերի տեսակների, որակի և քանակի տեխնիկական հետախուզությունը, ԱՄՆ-ի դեսպանությունների զինվորական կցորդների այն ապարատի ղեկավարությունը, որոնց խնդիրն է տեղեկություններ ժողովել արտասահմանյան բանակների քանակի, կազմության և տեղադրման մասին, հակահետախուզական և ռազմա-քարտեզագրական ծառայությունները։

Ռազմաօդային ուժերի հետախուզական ծառայությունը (էյ—2) ԱՄՆ-ի զինված ուժերի տեխնիկապես առավել կատարելագործված հետախուզական օրգանն է։



ՍԱ-12488

Նա զբաղվում է արտասահմանյան այն երկրների կարևորագույն օբյեկտների մասին լրտեսական տեղեկություններ ժողովելով, որոնք կարող են դառնալ օդից հասցվող հարվածների նշանակետեր։ Դրանից բացի, նա ջանում է հետախուզական ինֆորմացիա ստանալ օդանավակայանների տեղագրման, տեխնիկական ու շահագործական հատկությունների մասին, ինքնաթիռների և ավիատեխնիկայի, ինչպես նաև երկրի արհեստական արբանյակներ արձակելու արտասահմանյան պետությունների կարողությունների մասին։

Արտաքին հարաբերության իր բաժնի միջոցով նա ղեկավարում է ռազմաօդային կցորդների ապարատը։

Ռազմածովային ուժերի հետախուզական վարչության (ՌՕՀՎ) հիմնական խնդիրն է լրտեսական տեղեկություններ ժողովել, առանց բացառության, բոլոր երկրների ռազմածովային ուժերի, բազաների, նավահանգիստների և առափնյա սարքավորումների մասին։ Նա օգտագործում է ռազմածովային կցորդների ապարատը, իր գործակալներին տեղավորում է նավերում, լայն հետախուզություն է ծավալում հատուկ սարքավորված վերջրյա և ստորջրյա նավերի օգնությամբ։ Ամերիկյան հետախուզության գծով մասնագետները ՌՕՀՎ համարում են զինված ուժերի հետախուզական օրգաններից ամենից փոքրը։ 1961 թ. նրա կազմում կար 2600 մարդ։

Գլոբալ լրտեսական սիստեմում մեծ դեր է կատարում Ազգային անվտանգության գործակալությունը (ԱԱԳ), որն ԱՄՆ-ի խոշորագույն հետախուզական կազմակերպությունն է և որի գործունեությունը պատված է խստագույն գաղտնիության քողով։ Նա հիմնվել է պրեզիդենտ Տրումենի օրոք, 1952 թ. և սկզբնապես մի քանի հարյուր մարդուց էր բաղկացած։ Այժմ գործակալության կենտրոնական ապարատում աշխատում է ավելի քան 10 հազար մարդ։ Դրան պետք է ավելացնել նաև այն 3—4 հազար աստիճանավորներին, որոնք աշխատում են արտասահմանում և մոտ 20 հազար այն զինվորականներին, որոնք ձևականորեն այլ վարչությունների ենթարկված լինելով, իրականում աշխատում են միմիայն ԱԱԳ համար։ Նրա տրամադրության տակ են գտնվում երկու հազար ձայնորսիչների (радиоперехватчик) և ռադիոպելենգատորների պոստեր, որոնց ցանցը պատում է ամբողջ երկրագունդը։ Նրանցում տեղադրված են հետախուզական ընդունող կայանքներ, ռադիոպելենգատորներ, վերլուծող սարքավորումներ։ ԱԱԳ շահերի օգտին, բացի այդ, հետախուզություն են կատարում «Պուեբլո» տիպի լրտեսական նավերը, «EC—121» տիպի ինքնաթիռ-լրտեսները, ինչպես նաև երկրի արհեստական արբանյակները, որոնք հագեցած են էլեկտրոնային նորագույն սարքավորումներով, ներառյալ նաև հետախուզվող վերգետնյա օբյեկտների մասին ինֆորմացիան անհապաղ հաղորդող սարքերը։

Լրտեսական տեղեկություններ ժողովելու ասպարեզում ԱԱԳ-ի գործունեությունը գնահատելով, իտալական «Էպոխա» ամսագիրը նշում է, որ ներկայումս «շատ է խոսվում ԱՄՆ-ի կենտրոնական հետախուզական վարչության մասին։ Բայց լրտեսության ասպարեզում նրա գործակալների աշխատանքը չի կարելի համեմատել ազգային անվտանգության գործակալության աշխատակիցների գործունեության հետ։ Նրանում աշխատում են հազարավոր մարդիկ։ Նրանք օգտագործում են էլեկտրոնային սարքավորումները և արհեստական արբանյակները, որոնք երկակի խնդիր են կատարում՝ ա) «կարդալ ուրիշների փոստն» ու խանգարել «մյուսներին», բ) «կարդալ ամերիկյան կառավա-

ության փոստը»։ «Մյուսների» շարքին են պատկանում աշխարհի բոլոր երկրները, իսկ «փոստ» հասկացության տակ նկատի է առնվում հեռախոսային, հեռագրական, ռադիո և ռադիոռելեային հաղորդումները։ Ռադիոէլեկտրոնային միջոցներով կատարվող լրտեսությունն ԱՄՆ-ում ստացել է «էլեկտրոնային հետախուզություն», հապավված՝ «էլԻՆՏ» («էլեկտրոնիկ ինտելիջենս») անվանումը։

Դա նշանակում է, որ Մատե Խարիի ժամանակներն անցել են։ «Այսօր մի արբանյակը կամ հարմար տեղադրված մի անտենան,— պնդում են ԱԱԳ անանուն գործակալները,— մեծ ճշգրտությամբ են կատարում հարյուր լրտեսների, այսինքն ԿՀՎ գործակալների աշխատանքը։ Ավելին, էլեկտրոնային մեքենաները չեն ծախվում ու թշնամու ձեռքն ընկնելու դեպքում ավել պակաս դուրս չեն տա»։

Ինչպես վկայում են Դ. Ուայզը և Թ. Ռոսսը, «Ազգային անվտանգության գործակալությունը կարդում է ավելի քան 40, այդ թվում նաև ԱՄՆ-ի ամենից մերձավոր երկրների՝ գաղտնի գրագրությունը»։

1963 թ. հուլիսի 22-ին «Իզվեստիայում» հրապարակվել է Սովետական Միությունում քաղաքական ապաստան գտած Վիկտոր Նորիսկ Համիլտոնի նամակը։ Համիլտոնը հայտարարել է, որ ինքն աշխատել է ԱԱԳ-ի այն բաժնում, որը որսում և վերծանում էր արաբական երկրներից միացյալ ազգերի կազմակերպության իրենց պատվիրակությանը տրվող գաղտնի հրահանգները։

ԱԱԳ մյուս երկրներին է մատակարարում ծածկագրող մեքենաներ, ապա, իմանալով այդ մեքենաների կառուցվածքը, որսում է և կարդում դրանց օգնությամբ տրվող հաղորդումները։

Ձեռք բերված բոլոր հետախուզական տեղեկությունները հոսում են ԱԱԳ-ի պայտաձև երեք հարկանի շտաբ-բնակարանը, որը քողարկված է Մերիլենդ նահանգի անտառներում (Վաշինգտոնից 25 կմ հեռավորության վրա) և շրջափակված է եռակի փշալարերով։ Դա Պենտագոնից և Պետական դեպարտամենտից հետո իր մեծությամբ երրորդ կառավարական շենքն է։ Նրա նկուղներում տեղադրված է մի քանի միլիարդ դոլլար արժողությամբ էլեկտրոնային սարքավորում։ Այդ աստղաբաշխական գումարին հարկ է ավելացնել ԱԱԳ-ի անձնակազմի պահպանության և բոլոր հինգ մայր ցամաքներում ստեղծված «ականջ դնող կետերի» սպասարկման ամենամյա ծախսերը, ինչպես նաև այն միջոցները, որոնք տրամադրվում են Վենտենբերգի (Կալիֆորնիայի նահանգ) ռազմա-օդային բազայից պարբերաբար «Սոմոս» տիպի արբանյակներ արձակելու համար։ Դրանք, Դեվիդ Կանի հաշվարկներով 1966 թ. կազմել են մոտ մեկ միլիարդ դոլլար։

Հետաքրքրական է նաև այն, որ ամերիկյան մամուլի տվյալներով մինչև 1968 թ. վերջը ԱՄՆ արձակել է ավելի քան 200 արբանյակ-լրտես։ Այժմ Ամերիկայում մշակվում է նոր սիստեմի լրտեսական տիեզերանավ՝ «ՄՈԼ», որի մեջ կգտնվեն երկու տիեզերագնաց-գործակալ։

Պետական դեպարտամենտի հետախուզական-հետազոտական վարչությունը (ՀՀՎ) զբաղվում է քաղաքական, տնտեսական և սոցիոլոգիական բնույթի նյութեր ժողովելով ու մշակելով։ Նա մշակված ինֆորմացիան ամեն օր ներկայացնում է պետական քարտուղարին ու «հետախուզական ընկերակցության» անդամներին։ Վարչությունում աշխատում է մոտ 350 մարդ, իսկ նրա տարեկան ծախսերը կազմում են 3 միլիոն դոլլար։ ՀՀՎ-ի տարեկան արտա-

դրանքը կազմում է ավելի քան 16 հազար դոլլար։ Այդ ինֆորմացիոն նյութի համար հումք են ծառայում գլխավորապես հետախուզական այն տվյալները, որոնք ձեռք է բերում զինվանագիտական ծառայությունը։ Վարչությունն օգտագործում է համալսարանների գիտաշխատողներին և տարբեր գիտնականների պարբերաբար հանձնարարում է զեկուցումներ պատրաստել առանձին հարցերի շուրջը։

ԱՄՆ-ի կառավարական ապարատում բոլորովին յուրահատուկ տեղ է գրավում Հետաքննության ֆեդերալ բյուրոն (ՀՖԲ), որը ստեղծվել է 1908 թ.՝ որպես արդարադատության մինիստրության օժանդակ օրգան։ ՀՖԲ-ն Ամերիկայի գաղտնի ոստիկանությունն է, որը երկիրը պատել է իր ցանցով։ 1967 թ. նրա տրամադրության տակ կար 15 հազար ծառայող, իսկ բյուջեն կազմել է ավելի քան 150 միլիոն դոլլար, այսինքն արդարադատության մինիստրության ամբողջ հատկացումների ավելի քան 50 տոկոսը։ Բյուրոյի գործունեությունը ցայտուն ձևով է մերկացնում ԱՄՆ-ի «բաց հասարակայնության» մասին տխրահռչակ առասպելը։ ՀՖԲ-ի միջոցով ԱՄՆ-ի վերնախավը հալածանքներ է կազմակերպում կոմունիստների դեմ, ճգնում է ներսից քայքայել առաջադիմական արհմիությունները, երկրում ստեղծում է ահ ու սարսափի և փոխադարձ անվստահության մթնոլորտ։ Նրա ջանքերով ստեղծված է իրազեկների, լրտեսների և պրովոկատորների լայն ցանց։ «Կոմունիստական սպառնալիքի» դեմ պայքարի դրոշի ներքո բյուրոյի գործակալները թափանցում են ամենատարբեր կազմակերպություններ։ Նրա սև ցուցակների մեջ են մտցվում բոլոր այն ամերիկացիների անունները, որոնց գաղափարները «խռովարարական» են թվում։ Գաղտնի իրազեկների օգնությամբ ՀՖԲ «գործեր» է բացում իր համար անցանկալի մարդկանց, այդ թվում շատ ականավոր գիտնականների, հասարակական գործիչների, իրավաբանների, մշակույթի և արվեստի գործիչների վրա։

«Չեզոքության ստուգում», ՀՖԲ-ի քարտեր, նորագույն սարքավորումների միջոցով ունկնդրություն և ծածուկ դիտարկում, վերջապես ուղղակի սպանություն,— այս բոլորն այժմ դարձել են «ամերիկյան ապրելակերպի» բաղկացուցիչ հատկանիշները։

Այդ օրգաններից բացի ԱՄՆ-ում հետախուզական ֆունկցիաներով են օժտված նաև այլ՝ տնտեսական, պրոպագանդիստական, մինչև անգամ ֆինանսական գերատեսչություններ։ Ամերիկյան մասնագետների վկայությամբ ԱՄՆ-ում հետախուզական աշխատանքով զբաղված են 22 գերատեսչություններ։ Նրանք ունեն, այսպես կոչված, ճյուղային հետախուզական օրգաններ, որոնց իրավասությունները մշտապես ընդլայնվում են։

Ամերիկայի Միացյալ Նահանգների բոլոր հետախուզական օրգանների աշխատողների ընդհանուր թիվը կազմում է մոտ 200 հազար մարդ, իսկ լրտեսական-քայքայիչ գործողությունների համար կատարվող ամենամյա ծախսերը հասնում են 4 միլիարդ դոլլարի։ Համեմատելու համար նշենք, որ հիտլերյան Գերմանիան երկրորդ համաշխարհային պատերազմի ժամանակաշրջանում հետախուզության գծով ուներ 15 հազար աշխատողներ, իսկ հետախուզության կարիքների համար հատկացումները 20-ական թվականներին ԱՄՆ-ում կազմում էին ընդամենը 200 հազար դոլլար։

Այդքան ճյուղավորված ցանցի ստեղծումը և նրա գործունեության ոլորտների ընդլայնումը, տարբեր լրտեսական կենտրոնների անխուսափելի մրցակ-

ցությունը հարկադրել են ԱՄՆ-ի կառավարող շրջաններին ձեռք առնել բոլոր միջոցները հետախուզությունը կենտրոնացնելու և նրա օրգանների աշխատանքը կոորդինացնելու համար։

Գլոբալ լրտեսության ամբողջ սիստեմի գլուխ է կանգնած կառավարման բարձրագույն օրգանը՝ Միացյալ Նահանգների հետախուզության գծով խորհուրդը, որը գլխավորում է ԿՀՎ դիրեկտորը (այժմ՝ Ռիչարդ Հելմսը)։ Նրա կազմի մեջ են մտնում «հետախուզական ընկերակցության» ռազմական և քաղաքացիական գերատեսչությունների ղեկավարները։ Խորհուրդը շաբաթն առնվազն մեկ անգամ խորհրդակցություն է ունենում Լենգլիի շտաբ-բնակարանում, որպեսզի նախապատրաստի, այսպես կոչված, «ազգային հետախուզական գնահատությունները» կամ այլ խոսքով ասած ամփոփի «ընկերակցության» ձեռք բերած գաղտնի ինֆորմացիան։ Խորհուրդն ամեն տարի պրեզիդենտի համար 50—60 այդպիսի «գնահատություն» և հատուկ հաղորդումներ է նախապատրաստում։ Խորհրդին կից գործում են մոտ 60 հատուկ կոմիտեներ, որոնք համալրված են զանազան հետախուզական ծառայությունների էքսպերտներով։ Այդ խորհրդից բացի ԱՄՆ-ի «հետախուզական ընկերակցությունն» ունի հատուկ «պահակային կոմիտե», որը գործում է շուրջօրյա։ Պենտագոնում տեղավորված այդ կոմիտեն հատկապես հաշվի է առնում այն ինֆորմացիան, որը վերաբերում է քաղաքական, տնտեսական կամ ռազմական բնույթի իրադարձություններին և արտացոլում է աշխարհի բոլոր կողմերում տիրող դրությունը։

ԱՄՆ-ի հետախուզական օրգանների պետական սիստեմը համալրվում է լրտեսական-քայքայիչ գործունեությանն ակտիվորեն մասնակցող ոչ պետական կազմակերպությունների լայն ցանցով։ Դրանց թվին են պատկանում զանազան վտարանդիական խմբեր, «բարեգործական» կազմակերպություններ, տարբեր տեսակի «հովանավորման» ֆոնդեր և այլն։ Բոլորովին վերջերս Հնդկաստանի կառավարությունը որոշել է երկրում դադարեցնել Ասիական ֆոնդի գործունեությունը, որը հիմնել ու տնօրինում էին ամերիկացիները և որն ըստ էության դարձել էր ԿՀՎ-ի ֆիլիալը։ Համաշխարհային մամուլում հաճախ են երևան գալիս ԱՄՆ-ի հետախուզության հետ տուրիստների և այլ «խաղաղ ամերիկացիների» ունեցած խայտառակ կապերը մերկացնող նյութեր։

Ամերիկյան «հետախուզական ընկերակցությունը» սերտ կապեր է հաստատել Արևմտյան մյուս երկրների և առաջին հերթին ՆԱՏՕ-ի երկրների համանման գերատեսչությունների հետ։ Նա դարձել է համաշխարհային իմպերիալիզմի գլոբալ լրտեսության կենտրոն, որը, կոորդինացնելով «միության» մասնակից-երկրների դիվերսիոն-հետախուզական օրգանների գործունեությունը, նրանցից պահանջում է մշտապես ավելացնել դիվերսիոն նպատակների համար տրամադրվող դրամական ծախսերը։

Այդ դրամներով «...պետք է ստեղծվի միջազգային գաղտնի ներխուժման բանակ, որն ունենա միլիոն մասնագետներ՝ լրտեսներ, գործակալներ, կազմակերպիչներ, սաբոտաժնիկներ, պրոպագանդիստներ և ագիտատորներ։ Այդ բանակի յուրաքանչյուր ծառայող պետք է հատուկ դպրոցներում խնամքով նախապատրաստված լինի կատարելու իր առաջադրանքները ... Բանակի կազմի մեջ պետք է մտնեն բոլոր այն երկրների քաղաքացիները, որ ցանկանում ենք քաղաքականապես գրավել։ Նրա մեջ պետք է ընդգրկվեն ռուսներ, լեհեր, չեխեր, և շատ ուրիշներ (նրանց թվում նաև ամերիկացիներ)... Մեր քաղա-

քական բանակը պետք է աշխատի նախատեսվող քաղաքական բանակի ղեկավարների, կազմակերպիչների և հավաքագրողների հետ ձեռք-ձեռքի տված... Ներխուժման համար անհրաժեշտ է ունենալ տպագրական մեքենաներ, գրքեր, թռուցիկներ և ռադիոսարքավորումներ։ Մասնագետները պետք է հոգ տանեն կեղծ փաստաթղթեր ու անձնագրեր պատրաստելու մասին։ Պետք է հիմնել թերթեր և դիմադրության ռադիոկայաններ, ստեղծել գաղտնի ժողովների կազմակերպման հնարավորություններ և փախուստի ուղիներ։ Մենք պետք է գաղտնի բանակին տրամադրենք ղեկավարներ, դրամական միջոցներ ու նյութեր, որոնց կարիքը նա ունի»,— այսպես է գրել ամերիկյան հեղինակ ու հրատարակիչ Ջոզեֆ Լաֆֆան Մորզեն՝ Արևմտյան Բեռլինի «Թագեսշպիգել» թերթում՝ 1949 թ. նոյեմբերի 6-ին։

Այսպիսով, ամերիկյան «հետախուզական ընկերակցությունը», ինչպես և ՆԱՏՕ-ի բլոկն ամբողջությամբ, արդեն վաղուց են անցել ավանդական լրտեսության սահմանը։ Քայքայիչ գործունեությունը—խռովություններ կազմակերպելը, պետական հեղաշրջումները, դիվերսիաները, սաբոտաժը, քաղաքական և պետական անձնակազմի գործիչների սպանությունները, հասարակական կարծիքի ապակողմնորոշումը դարձել են նրա կարևորագույն ֆունկցիան։ Հենց դրա համար է ստեղծված դիվերսանտների գաղտնի բանակը։ Դեմոկրատիայի ու սոցիալիզմի ուժերի դեմ ճակատ առ ճակատ գրոհելու իր ռազմական փորձերում լուրջ պարտություն կրելով, իմպերիալիստական ռեակցիան ավելի ու ավելի շատ հույսեր է դնում իր հետախուզական-քայքայիչ կենտրոնների գործունեության վրա։ Իմպերիալիստական ռեակցիան, որին գլխավորում են ԱՄՆ-ի ագրեսիվ շրջանները, դիմում է առավել ստոր, առավել նենգ մեթոդների, որպեսզի շիկացնի ու բարդացնի իրադրությունը, խախտի ժողովուրդների ազգային անկախությունը, փորձի ետ շրջել դեմոկրատիայի ու սոցիալական առաջադիմության համար աշխատավորների պայքարը։

Հատկանշական է, որ իմպերիալիստական երկրների լրտեսական-դիվերսիոն օրգանների քայքայիչ գործունեությունը մշտապես ուղեկցվում է «հոգեբանական պատերազմով»։ Պենտագոնի 10—1 պլանի «Լ» հավելվածը, որի լուսանկարչական պատճենը հրատարակվել է իտալական «Մոնտ Նուովո» շաբաթաթերթում, կրում է «Հոգեբանական պատերազի գործողություններ» վերնագիրը։ Նրանում հոգեբանական պատերազմը բնորոշվում է որպես «պրոպագանդայի և այլ միջոցների պլանաչափ օգտագործում՝ նպատակ ունենալով ԱՄՆ-ի ազգային ձգտումներն իրագործելու համար ներգործել հակառակորդի երկրների սոցիալական խմբերի գաղափարախոսության, զգացմունքների և վարքագծի վրա»։ «Ռևյու միլիտեր ժեներալ» ամսագիրը դեռ 1958 թ. դեկտեմբերյան համարում ատլանտյան ստրատեգներից մեկը՝ Տիյոն, գրել է. «Այն պատերազմը, որ մղվում է սովորական (կլասիկ) միջոցներով նման է սուսերի, որը վերք է հասցնում, մինչդեռ «հոգեբանական պատերազմը» մի հիվանդություն է, որը ոչնչացնում է օրգանիզմի բջիջները»։ Այդպիսի պատերազմ մղելու հիմքում ընկած է այն ենթադրությունը, թե մարդուն փչացնելն ավելի հեշտ է, քան աղնվացնելը։

«Գաղափարների պատերազմ» մղելով, իմպերիալիզմը փորձում է խարխլել սոցիալիստական երկրների աշխատավորների գաղափարական-քաղաքական միասնությունը։ Այդ նպատակով նա ձգտում է օգտագործել բարոյապես անկայուն, թույլ, քաղաքականապես չհասունացած մարդկանց։

Պրոպագանդիստական-քայքայիչ գործողությունը կոորդինացնելու և գաղափարական դիվերսիաներն իրագործելու համար 1953 թ. ստեղծվել է ԱՄՆ-ի ինֆորմացիոն գործակալություն (ՅՈՒՍԻԱ), որը կենտրոնական ապարատից բացի ունի նաև մամուլի և մշակույթի սեկցիայի տեսք տրված բաժանմունքներ։ Դրանք գործում են ԱՄՆ-ի բոլոր դիվանագիտական ներկայացուցչություններին առընթեր։ Գաղափարական դիվերսիաների և «գաղափարական պատերազմի» մյուս ձևերի մասշտաբի մասին կարելի է գաղափար կազմել թեկուզ նրանից, որ ՅՈՒՍԻԱ-ի տարեկան ծախսերը կազմում են 170 միլիոն դոլլար։ Երեք հազար մարդ աշխատում է գործակալության կենտրոնական ապարատում, իսկ 9 հազարը՝ նրա արտասահմանյան ցանցում, որը 112 երկրներում ունի 233 պոստ։

ՅՈՒՍԻԱ-ն աշխատում է ԱՄՆ-ի կենտրոնական հետախուզական վարչության հետ սերտորեն համագործակցած։

«Հոգեբանական պատերազմ» վարելու բազմազան ձևերի մեջ կարևոր տեղ է գրավում այն գաղափարական և քաղաքական դիվերսիան, որ մղվում է ռադիոյով։ Տրանզիստորների երևան գալը զգալի չափով ինտենսիվացրել է քայքայիչ գործունեության այդ ձևը։ «Ամերիկայի ձայնը» հաղորդումներ է տալիս 38 օտար լեզուներով՝ շաբաթը 850 ժամ ընդհանուր տևողությամբ, և տարեկան ծախսում է 22 միլիարդ դոլլար։ Նրա հաղորդումների 40 տոկոսը նվիրված է սոցիալիստական երկրներին։ Արևմտյան Բեռլինում հիմնված է ՌԻԱՍ ռադիոկայանը, որն անդրօվկիանոսյան պրոպագանդիստների գնահատմամբ կարևոր տեղ է գրավում Վարշավայի պայմանագրի երկրների դեմ մղվող քաղաքական պայքարում։ «Ամերիկայի ձայնի» բաժանմունքներն են «Ազատ Եվրոպա», «Ազատություն» և այլ ռադիոկայաններ։

Բոլոր այդ հզոր ռադիոկայանները և պրոպագանդիստական խոշոր կենտրոնները զրպարտանքներ են տարածում սոցիալիստական լագերի երկրների դեմ։

Վերջին ժամանակաշրջանում աշխարհում տեղի ունեցած իրադարձությունները լիովին հաստատում են ՍՄԿԿ 1968 թ. ապրիլյան պլենումի եզրակացությունն այն մասին, թե լուրջ ցնցումների ենթարկվելով և ներքին ու արտաքին քաղաքականության մեջ խոշոր ձախողումներ կրելով, իմպերիալիզմը և առաջին հերթին ԱՄՆ-ի իմպերիալիզմը, ռազմաքաղաքական ասպարեզում ավանտյուրաների դիմելու հետ միաժամանակ ավելի ու ավելի շատ ճիգեր է գործադրում քաղաքական ու գաղափարական այն քայքայիչ պայքարում, որ նա մղում է սոցիալիստական երկրների դեմ, կոմունիստական և ամբողջ դեմոկրատական շարժման դեմ։ Դրա համար էլ այժմ, ավելի քան երբեք անհրաժեշտ է բարձրացնել ժողովուրդների զգոնությունը, նրանց ընդունակությունը՝ ժամանակին նկատել միջազգային ռեակցիայի կենտրոնների նենգ գործողությունները և դրանց խորտակիչ հարված հասցնել։

## СИСТЕМА ГЛОБАЛЬНОГО ШПИОНАЖА США

Р. Г. СИМОНЯН

**Резюме**

Никогда еще в истории США не было так сильно, как сегодня, влияние разведывательных служб на внутреннюю и внешнюю политику страны.

Американская разведка сегодня—это не один отдельный орган, а целое «разведывательное сообщество». Основной американской государственной организацией, занимающейся шпионажем, осуществлением саботажа, террора, диверсии и насаждением массовой разведывательной сети в глобальном масштабе является центральное разведывательное управление (ЦРУ).

В «разведывательное сообщество», помимо ЦРУ входят также: разведывательное управление министерства обороны (РУМО), разведывательная служба сухопутных войск (Джи-2), разведывательная служба ВВС (Эй-2), управление разведки ВМС (УВМР), агентство национальной безопасности (АНБ), разведывательно-исследовательское управление государственного департамента (РИУ), федеральное бюро расследований (ФБР), разведывательная служба комиссии по атомной энергии. Каждая из названных организаций сама по себе является крупным органом разведки и играет весьма важную роль.

Помимо этих органов, разведывательными функциями в США наделены и многие другие ведомства: экономические, пропагандистские и даже финансовые. По данным американских специалистов, в США разведывательной работой занимаются 22 ведомства. В них существуют так называемые отраслевые разведывательные органы. Общая численность сотрудников разведывательных органов США составляет около 200 тысяч человек, а ежегодные расходы на шпионско-подрывные действия достигают 4 млрд долларов.

Система государственных органов разведки США дополняется широкой сетью неправительственных организаций, активно участвующих в шпионско-подрывной деятельности. Сюда относятся различные эмигрантские группы, «благотворительные» организации, разного рода «филантропические» фонды и т. д. Поэтому ныне, как никогда, необходима высокая бдительность народов, их способность вовремя разглядеть коварные действия центров международной реакции и дать им сокрушительный отпор.